ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

ԵՄ հանուն բարեվարքության. Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) աջակցությունը Արևելյան գործընկերության երկրներին

Իրականացման ժամանակահատված: 01.05.2020 - 30.08.2024

ԱլԳ երկրներ:

Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 2 500 000

Ընդհանուր բյուջե: € 2 500 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

Open Government Partnership

Նախագծի կայքէջ: opengovpartnership.org/topic/eu-for-integrity-programme/

Նախագծի նկարագրություն:

Ծրագրի նպատակն է աջակցել ԱլԳ երկրներին փաստահեն հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման գործում: Ծրագրի խնդիրն է օգտագործել ԲԿԳ հարթակը՝ բաց, մասնակցային և պատասխանատու կառավարմանը և քաղաքացիակենտրոն ծառայություններին ուղղված ռեֆորմների մշակման և իրականացման համար՝ նպաստելով քաղաքացիական ակտիվության և քաղաքացիական հասարակության կայացմանը: Այս նախագիծը համահունչ է ԵՄ-ԱլԳ «20 արդյունք մինչև 2020-ը» նպատակներին, արտացոլում է «2020 թվականից հետո» ԱլԳ քաղաքականության մասին համատեղ հայտարարությունում շարադրված քաղաքական նպատակները և կհամապատասխանեցվի 2020 թվականից հետո ԵՄ-ԱլԳ քաղաքականության երկարաժամկետ նպատակներին: Ծագրի նպատակներին հասնելու համար ԲԿԳ օգտագործելու է տեխնիկական աջակցության, փորձի և գիտելիքի փոխանակման գործիքակազմ: Բացի այդ, դրամաշնորհային աջակցություն է նախատեսված՝ խթանելու համար քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը հակակոռուպցիոն, արդարադատության և պետական կառավարման ոլորտներում քաղաքականության ջատագովման, լավագույն կառավարման մշտադիտարկման և փորձի փոխանակման ասպարեզում: Ծրագիրը նախատեսում է նաև նորարարական դրամաշնորհներ՝ օժանդակելու այնպիսի առցանց գործիքների զարգացմանը, որոնք կաջակցեն կառավարության հաշվետվողականությանն ուղղված քաղաքացիական հասարակության գործառույթների իրականացմանը: Վերջապես, Ծրագրով նախատեսված է բարձր մակարդակի կառավարական փոխգործելիության աշխատանք՝ բարեփոխումներին քաղաքական

Ակնկալվող արդյունքներ:

- Քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցություն ԲԿԳ գործողությունների ազգային ծրագրերի մշակմանը և իրականացմանը. Բաց կառավարման բարեփոխումների բարելավված մշտադիտարկում և իրականացում; բարձր մակարդակի քաղաքական աջակցություն առանցքային բարեփոխիչներից և առաջնորդներից:
- Կառավարության և քաղաքացիական հասարակության միջև ուժեղացված երկխոսություն ԲԿԳ բազմաշահառու ֆորումներում; կոռուպցիոն բարձր ռիսկայնության բնագավառներում բարեփոխումների ուղղությամբ աշխատող շահագրգիռ կողմերի բարելավված մասնակցությունը բաց կառավարման քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում. ԱլԳ երկրներում հակակոռուպցիոն բարեփոխումների շուրջ աշխատող կառավարությունն ու քաղաքացիական հասարակությունն ավելի սերտ են համագործակցում: